

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այն լուրը, թէ օրիորդաց ի նստի տուպն երբ մէջ թոյլ կը արվին երթնելի աշակերտութիւնը...

Մոկ Եւրոպայի լրագիրը կարծում է, որ շուտով մեծ փոփոխութիւնները պիտի անն հաշտարար դա...

Ինչպէս յայտնի է Ռուսաստանում հաշտարար դատարանները (միջոցի ստեղծում) ընտրվում է...

Լուսնը որ դիտարկութիւն կայ թիֆլիսում բայց անկ օրիորդաց պատրաստական գիմնազիա...

Օր է սայից հետագործ հաղորդում են, որ թիֆլիսի քաղաքի արտաքին գործերի մինիստրը ձեռնարկ արեց...

Վրաց «Արթեր» լրագիրը լուր է թէ վրաց հոգևոր-պայտոցում: Թիֆլիսի մէջ, կամենում են վերջնել վրաց լեզուի դաստատարութիւնը: Լրագիրը ասում է...

Խաղի օրը համալսարանի 1871 թ. հայկից երկուս է, որ փորձերը մի տեսակ հիւանդութիւնները թիֆլիսում են ներառելով թափաք բժշկիկ բաւական ազդեցական: Մինչև անգամ բարակացաւ...

Մեր լուրը ենք, որ մեր թիֆլիսի հայ-թատրոնայինները խումբը դիտարկութիւն ունէ շուտով մի ներկայացում տալ բարեգործական նպատակով:

Մեկ յարտի է որ արդիւրեց «Кавказ» լրագիրը հաղորդում է, թէ եւրոպական կրօնական շարժումն այնքան ազդեցութիւն ունեցաւ և Հայերի վերա, որ փոքր-Սօխայի հայերը դիտարկութիւն ունեն ստաճարկել մի կրօնական ժողով հաւաքել էջմիածնի մէջ:

Մտնելով «Вестник Поморья» պարբերական հրատարակութիւնը ասում է, որ բոլոր հիւանդութիւններից, որք ծագեցան Բաղրամիստան հանդէսի ժամանակ, ամենից հիմնաւոր էր ժողովրդական խոհանոցը (նարդնայա կոչելիս), որ հանդէսի ժամանակ կերակուրը մինչև 28,000 մարդ: Մտնելով դաւաճապետ նորա հիմնելու օրից սրց էր ասլիս մեծ համակրութիւն արեւ գործին, որ էժան և սուղ կերակուր էր առաջարկում ժողովրդին, և այժմ երևում է որ նա կամենում է նպաստել նորա հիմնողներին հաստատել այդ գործի յարատեւութիւնը:

Գանձակի և Շուշու ուսումնարանների մասին տպւած մեր մի քանի նամակները, սրբեմնիկ և վեճ բայց արին, այնպէս որ այդ երկու քաղաքները մենք ոչոյն աւարկայի վերա անթիւ նամակներ ենք ստանում, որոց մի քանիսը հաւատարմութիւն են, որ յիշված ուսումնարանների գրութիւնը լաւ է, առաջադէմ է, բարեկարգ է, միւսները, որ վատ է, անպիտան է... Մենք կարծում ենք, որ այդ գործում, անդադար սպելով նամակները, որք մէկ միւսին հակառակում են, մենք ստանում գործ չենք պարզելու, որովհետեւ նպատակաւորները իւրաքանչիւրը մեղադրում է միւսին, թէ հակառակորդը ձեռնարկութիւն չէ անում, այլ կը քիչ շարժված է գրում...:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ն ԿԱՄԵՆՈՒՄ ՆԵՐՔՈՒՑՈՒՄ

Պատմեցնել թէ մեծացնել այս կամ այն հարկը, նուազեցնել կամ աւելացնել զօրքը, քանակութիւնը, յայտնել պատերազմ կամ չը յայտնել ինչ ծախսեր անել պետական գանձարանում ունեցած գումարներից, ինչ միջոցով փոխել հնացած օրէնքները և այլն, և այլն, — հաս, օրինակի համար, քանի մի խնդիրները այն անթիւ խնդիրները շարքից:

որք պետութիւնների կառավարութեան մէջ անդադար յարուցվում են:

Այս կամ այն վճիռը այդ խնդիրների, սերտ կապ ունէ և մտացածնի հետ և հետաքրքրում է ամենքին, ով պետութեան կազմակերպութեան մէջ մասնակից է, բայց մինչև որ աստիճան պետութեան մէջ բոլոր ժողովուրդը մասնակցում է այդ խնդիրների լուծելուն մէջ, — հաս այն չափը, որ որոշում է մի պետութեան բնաւորութիւնը միւսից:

Պետութեան գործերի մէջ ժողովրդի մասնակցութեան աստիճանը զանազան երկիրներում միմեանցից տարբեր է և օրինակի համար, բոլորովին ուրիշ ձև է կառավարութեան վայրերի ցեղերի մօտ, ուր որ բոլորը կախված է զլիւսորի անսահման կամքից, կամ Ամերիկայի Միացեալ Նահանգներում և Եւրոպայի քանի մի պետութիւններում:

Առաջիններում չը կայ ուրիշ կամք բացի պետի, իշխողի կամքից, չը կայ ուրիշ օրէնք բացի այն օրէնքից որ նա այսօր հաստատում է, իսկ վաղը ինքն էլ վերցնում է: Պետութեան բոլոր հարցերի վճռելը կախված է նորանից և աւելի ոչ օրէնք:

Ճշմարիտ է, որ շատ անգամ այս ինչ կամ այն ինչ անձն, այս կամ այն դաս մարդիկների այդ տեսակ ցեղի զլիւսորի վերա ներգործութիւն ունէ, բայց այդ ազդեցութիւն հազիւ է լինում հիմնաւոր, և միշտ ծառայում է մասնաւոր անձանց կամ մասնաւոր դասերի օգուտներին:

Այսպէս օրինակ հին Հնդկաստանում և Եգիպտոսում պետութեան գործերի կառավարութիւնը հողերարկանները, — քուրմերի, — ձեռքումն էր:

Նոյնը կրկնվեա վերջին ժամանակներում և հարաւային Ամերիկայում, որտեղ եղուխները, կաղմելով անկաս համայնքները, իրանց ձեռք գցեցին նոցա կառավարութիւնը:

Այդ տեսակ հասարակութիւնների մէջ վայելում են կենքը ամեն կողմից միայն հասարակական բարձր դասերը, այն ինչ ստորին դասերը սարսափելի չքաւորութեան և տգիտութեան մէջ են գտնվում:

Այդպէս չէ այն երկիրներում, որք կայանում են ուսմականական հիքերի վերա, որտեղ պետութեան ծաղկման առաջին պայմանը համարվում է ժողովրդի լիակատար մասնակցութիւն տէրութեան ամեն գործերում:

Բայց ինչպէս գլուխ բերած, որ իւրաքանչեւը տեղեկանայ աւերող ժողովրդի կարծիքին, — հաս ուսմականական սկիզբների գործադրութեան բոլոր դժուարութիւնը, մասնաւոր երբ նոքա պետի գործ գրած լինին մեծ պետութիւններին...: Բայց և այս դժուարութիւնը լլուցանվում է շատ պետութիւններում վաղուց ընդունված ժողովրդից ընտրված ներկայացուցիչներով:

Այսպիսի փոքրիկ հասարակական միւսւորներ, ինչպէս օրինակ գիւղը, շատ անգամ կառավարվում են բնակիչների ընդհանուր ժողովի միջոցով:

Բայց աւելի մեծ հասարակական միւսւորը, քաղաքը, որտեղ չէ կարելի մի խնդիր վճռելու համար հաւաքել բոլոր բնակիչներին, — կառավարվում է քաղաքից ընտրված քանի մի ներկայացուցիչներով:

Ինչպէս կառավարութեան այդ տեսակ ձևեր իրագործելի է քաղաքի համար, այնպէս էլ գաւառի և վերջապէս ամբողջ պետութեան համար գործադրելի է:

Եւ ճշմարիտ Եւրոպայի, գրեթէ բոլոր պետութիւններում զուգընթաց տէրութեան հետ լինում է ժողովուրդը, սովորաբար պարլամենտ անուանված, որ վերաստուգում է և հսկում է տէրութեան գործադրութիւնը և առանց օրի համաձայնութեան տէրութիւնը չէ կարող ոչ մի ձեռնարկութիւն սկսել:

Քանի մի երկիրներում մինչև անգամ

ինքն տէրութիւնը ընտրվում է այդ ժողովից: Եթէ պարլամենտը ներկայացնում է ազգը, ուրեմն բոլոր դժուարութիւնը ուսմական տեսակ պետութիւնների մէջ նորանունն է, որ նա ճշմարիտ լիակատար ազգի հաւատարիմ ներկայացուցիչ լինի:

Եւ հաս այն կէտը, որի չորս կողմը արդեան ժամանակում պարտում են ժամանակից քաղաքական հարցերը, և որի պատճառով յարուցվում է քաղաքական կուրուսուրդական բոլոր պետութիւններում:

Այն հասարակական դասերը, որք սուղ ինքնակամ կերպով վարում էին տէրութեան իշխանութիւնը, ենթարկվելով ժամանակի հօսանքին, թէ և ընդունում են պարլամենտի ձևը, բայց մի և նոյն ժամանակ աշխատում են, որ նորաներկայացուցիչների թւում, որքան կարելի է, քիչ մտնէին այնպիսի մարդիկ, որք ճշմարիտ ազգ են ներկայացնում:

Պետութիւններից մի քանիսներում կարող են պատգամաւորների ընտրութիւններին մասնակցել միայն նոքա, որք յայտնի դրամական կարողութիւն ունեն և իրանց կարողութիւնից մեծ եկամուտ են վայելում: Ուրիշներում ընտրված լինելու համար, պէտք է անպատճառ կալվածատէր լինել և ոչ փոքր կալվածքի...:

Այդ տեսակ սահմանափակութիւնը ընդէմ է ուսմականական կուրսակցութեան ոգուն, և այդ վերջինը այժմեան ժամանակում իր բոլոր ոյժերը գործ է դնում, որ ոչնչացնէ այդ եղած խտրութիւնը և որքան կարելի է բոլոր ազգին ճանապարհ բաց անէ, չը բաժանելով նորան ունեւորների և չքաւորների վերա (իսկ այդ վերջիններից է կազմվում միշտ ազգի բազմութիւնը) բոլոր ազգին մասնակցել տայ ընտրութիւններում ուղարկելով պարլամենտը այն մարդիկներին, որոց նա համարում է արժանի իր ներկայացուցիչներ լինել, և ոչ թէ ստիպված լինի ընտրել միայն այն անձերից, որք այս ինչ կամ այն ինչ մեծութեան կալվածքներ, այսքան չափ հող կամ առհասարակ մի նշանաւոր սեպհակաւորութիւն ունեն...:

Ահա քաղաքական կուրսների ընդհանուր ժամանակակից հարցերը, որոց մասնաւոր օրինակները մենք մի ուրիշ անգամ կը քննենք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

„Levant-Herald“ լրագրից տեղեկանում ենք որ Թիւրքիայի տէրութիւնը Սարգիս Էֆէնդիին ղեկավար նշանակել է Խալալայի մէջ:

Պ. Ժիւլ Սիմոն, ֆրանսիական ազգային լուսաւորութեան մինիստրը, հրատարակեց մի շքանշանական հրատարակութիւն և դարձնում մարմնական դաստիարակութեան անհրաժեշտութեան վերա և առաջարկում է մտցնել մարմնամարզութիւն, սուսերամարտութիւն (ֆիլսոփայիէ) և լոյ, նամակաւոր անողջապահութեան դասերը: Խոսելով մասնաւոր դաստիարակութեան վերա, նա հաստատում է որ լատինական լեզուն, թէ և սերտ կապ ունէ ֆրանսիականի հետ, այնքան հարկաւոր չէ (մեռած լինելով) որքան կենդանի լեզուները և առաջարկում է զլիւսաբար պէս ուղարկելու դարձնել մայրենի լեզուի և կենդանի լեզուների դաստատութեան վերա, ինչպէս գերմաներէնը և անգլիերէնը:

Գերմանիայի Հին-Վաթ օլիկների անուանված կուրսակցութիւնը պահանջում է, որ օրէնքով հաստատվէր, որ բոլոր եկեղեցական կայքը հասարակութեան մէջ, պատկանում է հասարակութեանը և նոցա կառավարելու կախված լինէր եկեղեցական խորհրդից որի անդամները ընտրվում են հասարակութեան միջից: Եւր հարկերը եկեղեցու պիտոյքների համար, կարող են հաստատվել միայն այդ խորհրդի համաձայնութեամբ:

Հին կաթոլիկների կուրսակցութիւնը (աղաւթաւոր կուրսակցութիւնը) պաշտպանվում է Պրուսիայի տէրութիւնից: Մի և նոյն ժամանակ ֆուրքաքաղաքում հաւաքվեցան կաթոլիկ եպիսկոպոսները, Պապի կուրսակցիները, և վեճեցին սաստիկ ընդիմադրութիւն անել գերմանական տէրութեանը թէ լրագրութեան թէ զանազան հիմնած ընկերութիւնների միջոցով:

— Սեպտեմբերի 17-ին (29) Գարեթթան մի ճառ կարդաց Գրենօրը քաղաքում, որտեղ զորոնց հանրապետականների անհաւատարմութիւնը դէպի պահպանողական (կոնսերվատիւ) կուրսակցութիւնը, և հաստատեց որ միմիայն աղաւթաւոր հանրապետութիւնը կարող է գոյութիւն ունենալ: Ֆրանս. „Bien Public“ լրագիրը պարսպում է Գարեթթայի այդ վարձուքը, ասելով որ այժմ այդպէս զրգուել ժողովրդին տէրութեան դէմ, կարող է վնասել ֆրանսիային:

— Պարսկական „Արան“ լրագիրը հաղորդում է, որ Պարսկաստանի մէջ հայը այնքան թանկ չէ, որքան ընդհանրապէս կարծում են: Յորէնի խալվարը ամէ 12 ուսուրի, գարի 6 ու, բրինձ, — 12 ու, 55 կոպ, և այլն:

— Թիւրքիայի զանազան քաղաքներում և նմանապէս Կ. Պոլսում քանի մի խոստովութիւններ եղել են ծխախոտի մեծաքանակութեան պատճառով: Առաջ ծխախոտը շատ էժան էր, և մի երկրում, որտեղ հասարակական ուրիշ զուարճութիւններ չը կան, կարծում էր կենսական պահանջ թէ այրմարդիկներին, թէ կանանց համար: Իսկ այժմ մեծաքանակութեան պատճառով թանկացաւ և վրջացաւ, որովհետեւ նորան տէրութիւնը խառնում է զանազան ուրիշ անախորժ նիւթերի հետ: Եւ հաս սաստիկ անբաւականութեան և խռովութեան պատճառը:

— Կ. Պոլսի անգլիական „Levant Herald“ լրագրում կարդում ենք, Հայաստանի վերնագրով նամակագրութեան մէջ, որ Էրզրում գաղաքում մեծ շքով տօնեցին Ռուսաստանի կայսեր անուանակոչութեան տարեդարձը և յունաց եկեղեցում կատարեցին գոնութեան ժամատացութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բագուի մէջ հրատարակվող ռուս „Восточный Азербайджан“ լրագիրը տպեց նորերումս ֆէլիտօսի բաժնում մի նամակ Թիֆլիսից, որտեղ խօսելով այն քանի վերա թէ շուտով նոր ռուս լրագիրներ կը հրատարակվին Թիֆլիսում, նամակագիրը ասելով լրագրում է, թէ այդ լրագիրները կերակուր կը տան „Кавказ“ լրագրի ֆէլիտօսիսաներին, և թոյլ կը տան նրանց հասնել „ինքնուրոյնութեան ամենաբարձր աստիճանին և կը հաւասարացնեն նրանց արեւմտեան եւրոպական Բէտլէ մի հիմնարկութեան ամենակրկնի ներկայացուցիչների հետ“: (Բէտլէ մի դժգոհուն Լօնդոնի մէջ, 1246 թուին հիմնած):

Գալու 1873 թուի համար Մոսկվայում հրատարակված ռուս օրացոյց „Собрание русских Календарей“ տալիս է յետապայ թուանանները. Հայերի թիւը կովկասում է 540 հազար, իսկ բոլոր Ռուսաստանի կայսրութեան մէջ 542 հազար: Ուրեմն կովկասը չը հայկելով Ռուսաստանի մէջ կայ ընդամենը 2 հազար հայ...: Մթթէ Կրիմ, Կոնստանդնուպոլիս, Մոսկու, Ստամբուլ, Բէսարաբիա, Մոսկու, Գեորգի, Կիւրուք, Լեհաստան և այլն, — միասին վերաւած միայն 2 հազար հայ են ներկայացնում...:

Նոյն օրացոյցի մէջ գտնուում ենք յետապայ թուանանները. 1870 թուին սղղափառ դաւանութիւնը ընդունեցին (ռուսացան), Կաթոլիկները 2883 մարդ, բողոքական կանոնակարգի 969, Հայ երկրի 12 մարդ, Հրէան և բլից 489, Մահաճախ և այլն 4900 և ուրիշ փոքր աղանդներից 5273, այնպէս որ 1870 թուին ռուս եկեղեցու դաւանութիւնը ընդունեցին 14,536 մարդ:

Լօնդոնի „Times“ լրագիրը տպել է նորերումս մի յայտարարութիւն, որ Գէլիս անունով դրամատուրգ Ժողովուրդ են ամեն օր կարելի է գնել, Եւրօպիա կայսրութեան ներկայութիւնները: — Եթէ այդպէս է, նշանակում է, որ արքայական կայսերական ընտանիքի նիւթական դրութիւնը նախանձելի չէ, եթէ տիկինը պիտի նկարէ, որ իր մարդուն կերակրէ...:

„Journal de St. Pétersbourg“ լրագիրը պատմում է թէ Անգլիայում սովորութիւն կայ խեղագարներին քննելու ժամանակ, առաջարկել նրանց կտոր թղթի վերա մի փաթեկ շարադրութիւն գրելու: Նորերումս այդ սենյակի մէջ քննելը շարադրութիւն էր պահանջել մի հիւանդ ազնվալից: Առաջարկված զրկածը կարդալուց յետոյ, քննելը վճռում է որ սա իր անկապ մարդիկ, իր անձօնութեան պատճառով իսկ ինքնազարկած երևակայութեան ծնունդ լինելով, հիւանդ աղջիկը դարձնաւ պիտի մնայ երկար ժամանակ հիւանդանոցում: Բայց որքան զարմացաւ պարսն քննելը, կըր տուն գալով և անհող կերպով ձեռքը վերցնելով այն օրվայ Daily Te-

tegraph լրագրի թերթը, նա ճանաչեց հիւանդ աղջկայ խորամանկութիւնը: Խեղճ աղջիկը իր շարադրութիւնը որ ընդհին իրաւունքով ճանաչել էր կատարեալ խելագարութեան ծնունդ, արտագրած էր բառ առ բառ քաղաքական թերթի առաջնօրը ողջ ողջ յօդուածը:

Ուրիշն քննել կլինէր թշուար կարծիքը խեղճ աղջկայ մասին, եթէ իր շարադրութիւնը արտագրած լինէր մեղանում հրատարակվող լրագիրների առաջնօրը յօդուածներից:

ՊԱՏԱՍԽԱՆ

Մեղուի 31 համարում կարգադրվեց մի նամակ Գաւրիէից Հեթում ձեւաւանի ստորագրութեամբ: Մեղուին շատ ընտանեւ էր մի այդպիսի գրուածքը իր էջերու մէջ տեղադրել, նախ որ, Մշակին էր դիտուած, երկրորդ, նորա խմբագրութեան աշխատակիցներին մինչին:

Պ. նամակագիրը առանց հիմնաւոր փաստերի կամեւում է ապացուցանել, թէ Մշակի 31 համարում տպուած Ղարաբաղու նամակը ամենեւին Պարսկաստանից գրուած չէ եղել, այլ նա հնարած է նոյն խմբագրութիւնից, անձնական կրքերի առիթով զէպի Գավրիէի Սրբազան Առաջնորդը:

Պատասխանատուութիւնը թողելով այդ նամակի հեղինակի վերայ, թէ նա իսկապէս գրուած է եղել Պարսկաստանից, եւ չը ինչով նորանից իր խօսքերը գրուողապէս արգարացնելու իրաւունքը, մենք աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել մի քանի նկատուածքները պ. ձեւաւանի նամակի մասին, ինչ որ վերաբերում էր Մշակի խմբագրութեանը:

Պ. ձեւաւանը խօսում է ինչ որ յօդուածի մասին, որ իբր թէ տպուած էր Մշակի խմբագրութիւնից Ղարաբաղու վերայ, որոյ մէջ յայտնուած էին սուս և անհիմն տեղեկութիւններ այդ գաւառի մասին, և թշուանական դրպարութիւններ Գավրիէի Սրբազան Առաջնորդի վերայ և այլն և այլն:

Ան պարունի իսկական խօսքերը:

«Բանդի որպէս քաջ զինեմք, յօդուածագիրը թամանակաց քաջ առու թեւ մեր (զուցէ կամի ասել բացակայութեամբ) անձնութիւն է տեղաւայ և թէ Ղարաբաղու ներկայ գործոց, անցից և դրոթեանը: Գանի սոցիւրից յետոյ աւելացնում է. «որոյ համար յոսան անշուշ կը ներուի ինձ անը, թէ յօդուածագիրը ոչ աղքատիւրական եւանդով վառուած՝ այլ անձնական կրքից ծխով կորացեալ, Տարխա շտառած՝ Գարիբոյ առաջնորդը կը դատապարտէ անխոնհաբար»:

Պարոնը երկի ինքը «ան ձն ա կան կրքի ծըխով կորացած է» որ չէ ամաչում լոյս ցերեկով իր սուր տարտակի տեղ ջոյց տալ և Մշակի խմբագրութեան վերայ այդպիսի դրպարութիւն ղերնել: Երբ որ Մշակի խմբագրութիւնը, սկսեալ իր թերթերի առաջինից մինչև վերջինը, իր համարների մէջ իր կողմից գրուած որ և իցէ յօդուած Ղարաբաղու, Թարիբի, կամ այնտեղի Առաջնորդի վերայ երբէք տպուած չէ, թէ առաջնորդը յօդուածների մէջ, թէ ներքին տեսութեան և թէ արտաքին տեսութեան մէջ, եթէ կայ մի այդպիսի յօդուած, թող ջոյց տայ պարոնը թէ Մշակի որ համարումն է տպուած:

Մեղուի Գավրիէի թղթակիցը վերջապէս իւրեան թոյլ է տալիս Մշակի խմբագրին դիպելու: Ասելով թէ «Իրուսո-գաղիական անողնան մղաքիւր այնքան հակառակ չեն միմեանց նկատմանը, որքան որ պ. խմբագրի միտքը զէպի իր համարին աղքատիքը ի Պարսկաստան: Եւ կը զըրպարտէ յանպարտս իր Ատրպատականի եղբարը համարելով թէ նորա կրօնափոխութեան կը դիմեն, հետզհետէ բողոքականութեան պատրաստած թակարդը խորատուգիլով, այդ մի աննեղի սըտութիւն է»: Եւ մի քանի տնայտ խօսքեր աւելցնելէն յետոյ վերջացնում է իբր թէ Մշակը «լուսոյ և... ճանը թողած, մի աննիւթ և վատ լայտերով խաւարային աղբամոյզի մէջ խորխորակելով կը շրջի»:

Մի կողմից անկողորարանութիւն կը լինէր պատահանի պարոնի այդպիսի անիւղ ցրից շատախօսութեանցը, որ առանց Մշակի խմբագրի յօդուածները կարդալու և նորա սուղութիւնը կրտակաբար քննելու, և առանց դիմանական և արհեստական կերպով շորա թերութիւնը ցուցանելու, բաւականամում է միայն իր անձնական իսկ կարծիքը յայտնել, չը մտածելով որ կարծիքը կրտակալ չէ:

Մեղուի Գավրիէի թղթակիցը, խօսելով Մշակի խմբագրի մասին, իր կարծիքը հիմնում է այնպիսի փաստերի վերայ, որ իսկապէս ոչ եղել են և ոչ կան: Եւ առում է թէ Մշակի խմբագիրը Պարսկաստանի Հայերի մասին այս և այն սուտ ու սխալ մտքեր է տարածում: Երբ որ Մշակի խմբագիրը իր թերթերի իննամեայ շրջանում իւր

սեպէս կան յօդուածների մէջ, ոչ մի գրուած առանձնապէս նուիրած չէ Պարսկաստանի Հայերին: Միայն նա իր թերթերի մէջ տպել է մի քանի նամակագրութիւնք Պարսկաստանի զանազան պարոններից ստացած: Բայց եթէ այդ նամակագրութեանց մէջ կային անձնութիւնք, դա իբրբար չէ վերաբերում, այլ պատասխանատուութիւնը մնում է նոյն հեղինակների վերայ:

Մեղուի Գարիէի թղթակիցը փոխանակ Մշակի մէջ տպուած Պարսկաստանի նամակագրութեանց սխալները ցոյց տալու, Մշակի խմբագրի վերայ է յարձակվում, կարծելով, թէ նա ինքն է գրում այդ նամակները, չը նայելով որ, նոյն հեղինակների անունները իւրեանց նամակների ներքեւ ստորագրուած են:

Այդպիսի նամակագրութեանց թղթով Մշակը տպել է իր 31 համարում մի նամակ (բայց ոչ թէ յօդուած) Ղարաբաղու վերայ որ նա ստացել էր Պարսկաստանից իր բաժանորդների մինից, Հեղինակը իւր նամակի մէջ նկարագրում է Ղարաբաղը զաւառի աշխարհագրական տեղագրութիւնը, նորա բնութեան հարստութիւնը ու բերքերը, նորա աղբաբնակութիւնը, ու Հայ ժողովուրդի թէ ներկայ և թէ անցեալ ժամանակների դրութիւնը, վերջապէս նա նկարագրում է Խաների, Չալարխաների սարսափելի բռնակալութիւնը զէպի Հայ ժողովուրդը ու Արատու գիւղի բարբարոսական անցքը: Եւ այն նամակի մէջ խօսում է նա և Ատրպատականի հողերի քառավարութեան վերայ: Այդ նամակը մինչև այն աստիճան հետաքրքրական էր ամէն մի Հայ մարդի ուշադրութեանը, մինչև Պոլսի Մանրուէ Էջեբար լրագիրը ամբողջապէս իւր թերթի մէջ տպել էր Մշակից:

Գուցէ այդ նամակի մասին լինի պ. ձեւաւանի խօսքը, նորան յօդուած է կոչելով, և Մշակի խմբագրութեան աշխատակիցների մինից հնարած համարելով: Բայց հարկաւոր էր կատարեալ մարդարեական հողի ունեւալ, որ Թիֆլիսից մի այնպիսի օտար և անձանութ երկրի վերայ այնպիսի մանրամասն տեղեկութիւններ դրել և աւօրեայ անցքերը հարդրել: Բայց մարդարեանի դարը վարուց անցելէ:

Կամենալով հաստատել Ղարաբաղու նամակագրի տղիսութիւնը իւր հարդրած տեղեկութիւնների մասին, պ. ձեւաւանը բերում է մի փաստ, թէ նա նոյն գաւառի հայաբնակ գիւղորդից թէ մէջ չափազանցութիւն է ցուցանում, գրելով թէ Ղարաբաղի մէջ կային 38 հայաբնակ գիւղորայք և նոյն բնակչաց թիւը միջին թիւով հասնում էր մինչև 30-տուն: Պարոնը երկի Ղարաբաղու նամակին էլ չէ կարդացել, որովհետեւ, այնտեղ 38 գիւղ չէ գրուած, այլ 28 գիւղ: Իսկ մեր պ. կրտակիսի ցոյց տուած թուանշանները, որով կամենում է նա հերքել Ղարաբաղի նամակագրի խօսքը, անկի հաստատում են նորան, եթէ նա 28 թիւի տեղ 38 չը դնէ:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՒՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ	(Հոկտեմբերի 12-ին)	
ՈՍԿԻՆ, (պօրութեանը)	6	23
ՓՈՒՍՆԱԿԱԳԻՐ (բարակ) Պօլս.		
վճարելիք (լիտա Օսմանեան)	6	28
ԲԱՄԲԱԿԵՐ Երևանու.	5	60
Ամերիկայի սերմից.	8	—
ԹԱՄԲԱՑՈՒ Տրապիզոնի 12—13	—	—
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրոցկու)	8	—
միւս տեսակը.	7	80
զարգանիցու տրանցիլ.	5	75
մաքուր վճարած.	8	75
ՇԱՔԱՐԸ ՌԱՅԸ Ռսի.	7	30
ԲՈՒՐԻՐ Թուրքի.	9	80
թարեբամի.	6	50
ՂԱՀՎԱ Լիվանի լաւ.	13	50
Մարտիկից, ցածր.	12	50
Մօկո, շատ լաւ.	14	70
ՊՂՊԵՂԸ.	11	50
ԵՐԿԱՍ.	3	50
ՄՈՄ.	11	20
ԱԼԻԻՐԸ կրօնադատկայ Ռուսաստանի բէքը փութը.	3	60
ԱԼԻԻՐԸ կրօնադատկայ Ալավրդեանի տեղական ջաղացից (Գեանջալու).	№ 1	3
»	№ 2	2
»	№ 3	2
ԱԼԻԻՐԸ Գեանջու հասարակ.	1	90
» Ծորագեալու.	1	80

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՓՈՒԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1872 թուի սեպտեմբերի 1-ին կայ շրջող դրամագրու 263,190 մ. և ապահովութեան դրամագրու:

2,368,710 ռուբլի

Այս ԲԱՆԿԸ, Բարձրագոյն Հաստատուած կանոնադրութեան հիման վրայ հետեւեալ գործերն է կատարում. 1. ընդունում է դումարներ ա. հասարակ հաշուին և բ. պայմանաւորուած հաշուին. 2). ընդունում է փողեր շահեցնելու համար ա. անժամանակ և բ. սահմանուած ժամանակ-միջոցներով. 3). գեղումն է անում և ոչ պակաս երկու ստորագրութիւն ունեցող մուրհաններ և սօր—մուրհաններ (մի ստորագրութիւն ունեցող մուրհաններ), որոնք ապահովացրած են ապանքով, տոկոսաբեր թղթերով և անշարժ կայքերով. 4). փող է փոխ տալիս տոկոսաբեր թղթերը գրաւ վերցնելով. 5). կրեպիտ է բացանում առանձին հաշու ունեւալու համար գրաւական վերցնելով տոկոսաբեր թղթեր. 6). փոխանցում է անում գումարներ Ռուսաստանի ամենանշանաւոր առեւարկան քաղաքներ և նմանապէս կատարում է և այլ յանձնարարութիւններ տոկոսաբեր թղթերի գնելու և վաճառելու մասին, վճարելու փողերի ստանալու մասին և այլն. 7). ընդունում է փողեր պահելու համար:

Մինչև փոփոխութիւնը, բանկը վճարում է և առնում է 1872 թուի ապրիլի 19-ից տոկոսից հետեւեալ չափով:

ՎՃԱՐՈՒՄ Է	ՍՈՒՆՈՒՄ Է	
ՀԱՇՈՒՆ ԸՆԿՈՒՆԱԾ ՓՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ.	Մուրհանների գեղելու համար. 9%	
ա). հասարակի համար.	4 1/2%	
բ). պայմանաւորուածի համար.	5%	
ՇԱՀԱՅՆՆՈՒ ԸՆԿՈՒՆԱԾ ՓՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ.	ՍՈՒՆՈՒՄՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
ա). անժամանակ.	8%	
բ). 6 ամսով և 1 տարով.	5 1/2%	
գ). 18 ամսով և 2 տարով.	6%	
	ա). ապանքով ապահովածների հ. 7 1/2%	
	բ). տոկոսաբեր թղթերով ապահովացածների համար.	8%
	գ). անշարժ կայքերով ապահովացածների համար.	8%
	Տոկոսաբեր թղթերի գրաւականով փոխ առած փողերի հ.	8%
	Առանձին հաշու ունեւալու հ.	7 1/2%
	Ժամանակաւոր թղթերի և կուպոնների (տոկոսաբեր) գեղելու համար.	7%
	Կովսիտա 1/100-ից.	2%

Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի բանկը ընդունում է շահացնելու համար դումարներ ամեն կոչման չափահաս անձինքներից, դիւանատներից, այլ և այլ հաստատութիւններից, եկեղեցիներից, վանքերից և այլն:

Շահեցնելու փողերը ընդունում է բանկը թէ փողերի տերերից և թէ նոյն հաւատարմութեամբ ներկայացնող անձերից և նմանապէս փոստայով Ռուսաստանի ամեն երկրներից անժամանակ մինչև յետ պահանջելու և որոշուած ժամանակներով ոչ պակաս 6 ամսից և ոչ աւելի 2 տարուց: Շահացնելու համար ներկայացրած փողը չը պէտք է լինի 100 մանթից պակաս:

Բանկը ընդունելով այդպիսի փողեր տալիս է փողատիրոջ կամքին նայելով կամ անուանաւոր և կամ անանուն անդորրագրեր:

Բանկը յետ է դարձնում այդպիսի փողերը տերերին՝ ժամանակաւորները ժամանակի լրանալուց յետոյ, իսկ անժամանակները անդորրագրի ներկայացնելու հետեւեալ օրը իսկ տոկոսից տալիս է բանկը անժամանակ ներս տարած փողերի համար դրամագրի վերադարձնելիս. կամ եթէ դրամագրու լրը յետ չը լինի պահանջվում իւրաքանչիւր վեց ամսից յետոյ իսկ ժամանակաւորապէս ներս տարած փողերի տոկոսից արվում է վեց ամսից մէկ անգամ:

Տոկոսիցը հաշվում է անժամանակ ներս տարած փողերի վրայ իւրաքանչիւր օրուան համար, որ փողը գտնուել է բանկումը բայց եթէ դրամագրու լրը մնաց բանկում 15 օրից պակաս ժամանակ, տոկոսից չէ վճարվում այդպիսի փողերին, իսկ ժամանակաւոր ներկայացրած փողերի տոկոսիցը հաշվում է կէս կէս տարիով:

Անանուն անդորրագրերը կարող են փոխանցուել մէկից միւսին արվելով իսկ անուանաւոր անդորրագրերը փոխանցելու համար պէտք է նոյն վերայ բլանկ (մակագիր) անուի և այդ մակագիրը պէտքէ հաստատէ նոտարիւսը և որոնել նոտարիւս չը կայ պէտք է հաստատէ հաշտարար դատաւորը և կամ պէտքէ դրա մասին յայտնել բանկի վարչութեանը, որն որ իւր մատեաններում տրանսֆերտ (փոխանցումն) է անում:

Բանկի կանոնադրութեան § 19 հիման վերայ, բանկի անդորրագրերը ընդունած փողերի մասին ընդունվում են ամեն դիւանատներում այն գնելով, որ կը սահմանէ ելեւտից մինիստրը:

Բանկումը ներս տարած փողերը ապահովացած են բանկի թէ շրջող և թէ ապահովութեան դրամագրով:

Ներս բերելու փողերը պէտք է ուղարկուին բանկը հետեւեալ յայտարարութեան հետ միասին:

Въ Правление Тифлискаго Общества Взаимнаго Кредита, отъ такогo-то, объявление. Препровождая при семь столько—то рублей, прошу принять эту сумму на вкладъ для обращенія изъ процентовъ на такой то срокъ (или до востребованія) и выслать билетъ на мое имя, или на имя такогo-то, или на имя предьявителя, по такому—то адресу. Число, мѣсяць, годъ, подпись и мѣстожителство.